ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՐՄՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	Անջրանցիկ հագուստ	-	ԱՐՄՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ	Անջրանցիկ կոստյում, ՍԶ զինվորի (մեկ հատը կազմված է անջրանցիկ բաճկոնից և տաբատից) Արտադրվում է ՀՀ ԱԱԾ ՍԶ գործող մարտական համազգեստի երանգներով՝ մուգ կանչ գույնի, դեղնավուն պիկսելային քողարկող զարդանախշով: անջրաթափանց սինթետիկ գործվածքից կամ ներսի կողմից պոլիուրետանի ծածկույթով, գործվածքի մակերեսային խտությունը՝ 120-140 գրամ: Բաղկացած է անջրանցիկ գլխանոցով բաճկոնից և տաբատից: Կարերը սոսնձված են անջրանցիկ ժապավենով: Բաճկոնը մշակված է առաջամասից և թիկունքամասից, լայն, ուղիղ ձևվածքով, աջ և ձախ կողմերից արված են 35-38սմ-անոց շեղ բացվածքներ, որոնք կիպ փակվում են ինքնակպչուն ժապավեններով կարված կափույրներով : Լայն ձևվածքով թևքերը դաստակի հատվածում

				նեղանում են և ունեն ռետինային ծալվածքներ: Բաճկոնի և գլխանոցի միացման կարերը, թևերի և կափույրների կարերը մշակվում են փակ զույգ կարով: Գլխանոցը՝ երեսամասից , վզի հատվածը և բաճկոնի ստորին հատվածը կարգավորվում են ծալվածքի մեջով անցկացված քուղերով, որոնց ծայրերին ամրացված են չափսի զսպանակային կարգավորիչներ: Տաբատը ուղիղ ձևվածքով է, ունի թեք աջ և ձախ գրպանային ճեղքեր (24-26սմ), որոնք կիպ փակվում են ինքնակպչուն ժապավեններով կարված կափույրներով: Լայն ձևվածքով տաբատը ստորին հատվածում նեղանում է և ունի ռետինային կարգավորվող ձգաններ: Արտադրվում է Պատվիրատույի կողմից ներկայացված նմուշի չափորոշիչներին և ձևին համապատասխան , 42/2-ից 66/6 չափս-հասակի: Անձրևանոցը ինքնափաթաթվում է գլխանոցի մեջ: Փաթեթավորումը՝ թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 30-50 հատ: Պարկերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, պայմանագրի կոդը, արտադրողը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО «Армтекстиль» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏվ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
6				